ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԵՐԺ ՉՅՈՒՐՈՒՔԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԵՐԺ ՉԻՒՐՈՒՔ, ՈՐ Ի ՄԱՐՍԷԼ, ՖՐԱՆՍԻԱ

Գոհունակութեամբ տեղեկացանք, որ փարոյս Յուլիս 2-ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախաձեռնութեամբ Մարսէլում կազմակերպուում է Ձեզ նուիրուած մեծարման հանդիսութիւն: Ուրախալի այս առիթով համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու բարեմաղթանքները:

Մեր ժողովրդի արժանաւոր զաւակն էք Դուք, յարգարժան պրն Չիւրուք, միաժամանակ՝ արժանաւոր զաւակն ու քաղաքացին Ֆրանսիայի: Երկարամեայ կորովի ու եռանդաշատ գործունէութեամբ Դուք ազնիւ ներդրում էք բերում Ֆրանսիայի հասարակական-տնտեսական կեանքին՝ հաւատարիմ մնալով մեր ժողովրդի ազգային եւ քրիստոնէական արժէքներին: Ձեր եւ Ձեզ պէս ազնիւ հայորդիների գործերով ու նկարագրով մեր ժողովուրդը բարի համարում է վայելում Ֆրանսիայում: Մեզ համար ուրախութիւն է անդրադառնալը, որ տարիների Ձեր վաստակը արժանիօրէն գնահատուել է Ֆրանսիայի կառավարական պարգեւներով, եւ այսօր էլ Դուք գիտնականի Ձեր կարողութիւններն ու կառավարման փորձը ներդնում էք՝ մեծ յաջողութեամբ ղեկավարելով համաշխարհային խոշորագոյն ընկերութիւններից մէկը հանդիսացող «Ալքաթել» ընկերութիւնը:

Տեղեակ ենք Առաջնորդ Սրբազանի միջոցով որդիական Ձեր սիրոյն մեր Եկեղեցու հանդէպ եւ նախանձախնդիր մասնակցութեանը եկեղեցական կեանքին: Ձեր կեանքն ու գործունէութիւնը, արձանագրած ձեռքբերումներն ու հեղինակութիւնը, Ձեր սէրն ու նուիրումը Հայ Եկեղեցու հանդէպ քաջալերող օրինակ են երիտասարդ հայորդեաց համար՝ ապրելու քրիստոնէական հոգեւոր արժէքներով, ճշմարտապէս գնահատելու աշխատանքը, ջանադրութիւնը, առաջընթացի նպատակն ու ձգտումը, որոնք պիտի օգնեն նրանց գտնելու իրենց ճանապարհը եւ յաջողութիւնների հասնելու ներկայ կեանքի բազմակողմ ընթացքների մէջ:

Ցարգարժան պրն Ձիւրուք, սիրով ընդառաջելով Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նագաշեանի եւ ՀԲԸ Միութեան Նախագահ Տիար Պերճ Մեղրակեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Իշման Սուրբ Սեղանի առջեւ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ Ձեր ընտանիքին եւ մաղթում, որ Տէրը բարեխօսութեամբ մեր մեծ Ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ գործոց յարաւորոգ յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին ի Հայաստան եւ ի Սփիւռս:

Ողջ լեռուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Յունիսի
Յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 302